

ԼԵՋՈՒՆԳԻԻՏԱԿԱՆ

ԻՐԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅԵՐԷՆԻ ՎՐԱՅ^(*)

Այս կարևոր հարցը վճռելու միակ եւ ամենատարող միջոցը ձայնական օրէնքներն են: Հնդեւրոպական լեզուների ձայնարանութիւնը մեզ սովորեցնում է թէ՛

1. Նախալեզուական ք դ զ¹ զ²

դառնում են՝

Հայերէնի մէջ՝ պ ռ ծ կ

Իրանեաց մէջ՝ ք դ զ զ, ջ

Ըստ այսմ եթէ մի հայերէն բառ պարունակում է պ, ռ, ծ, կ, ձայները, և նրա համապատասխան իրանեան ձեն ունի ք, դ, զ, զ, ջ, ուրեմն դա բնիկ հայերէն բառ է: Իսկ եթէ այդ հայերէն բառը պ, ռ, ծ, կ, ձայները փոխարէն ունի ք, դ, զ, զ, (ջ), անպայման իրանական փոխառութիւն է: Այսպէս՝ *սասն* և *դահադրամ* բառերի համապատասխան *պրս*. ձեւերն են՝ *դան*, *դան*-*դիրամ*, որոնք երկուսն էլ ունին դ, մինչդեռ հայերէնի մէջ առաջինը ունի ռ, երկրորդը դ. ուրեմն *սասն* հայերէն է, իսկ *դահադրամ* պարսկերէն: Արժաք բառի իրանական ձեն է բրզգաս, որի մէջ մեր ծ ձայնի համապատասխան է զ, ուրեմն արժաք հայերէն բառ է և եթէ պարսկերէն լինէր, գոնէ արգաք ձեւը պիտի ունենար:

2. Նախալեզուական պ բառակցութիւն դառնում է հայերէն հ, ձայնաւորից յետոյ ւ, իսկ իրանականների մէջ միշտ մնում է պ: Ուստի եթէ մի հայերէն բառ ունի բառակցութիւն հ, որի համապատասխանն է *պրս*. պ, ուրեմն այդ բառը բնիկ հայկական է, իսկ եթէ ունենայ փ կամ պ, զուտ պարսկական փոխառութիւն է: Այսպէս հյ. հետ, հետք, որ է *պրս*. պալ, «ոտք», բնիկ հայերէն է, իսկ փալիք «հետխտն սուրհանգակ», *պրս*. պալիկ, պարսկական փոխառութիւն է:

3. Նախալեզուական ե, օ ձայնաւորները հայերէնի մէջ դառնում են ե, ո, իսկ

իրանականների մէջ հաւասարապէս լինում են ա: Ուստի երբ մի հայերէն բառ ունի ե, օ ձայները, իսկ նրա համապատասխան *պրս*. բառի մէջ նոյն ձայների զէմ ունինք ա, այդ բառը բնիկ հայերէն է. իսկ եթէ հայերէնի մէջ լինի նոյնպէս ա, անշուշտ պարսկական փոխառութիւն է: Այսպէս բեռն, նոր, չորք, կով = *պրս*. բար, նավ, չանար, զավ բնիկ հայերէն են, իսկ դաւազան, նաւասարգ = *պրս*. զավզան, նաւասարդա պարսկական փոխառութիւն են:

4. Նախալեզուական սեր դառնում է հայերէն յր, իսկ իրանականների մէջ հնում *sur*, նորում վար, ուստի ուր որ հայ յր խմբի զէմ գտնենք *պրս*. *sur*, վար, նա անշուշտ բնիկ է, իսկ եթէ յր խմբի փոխարէն հայերէնն ունենայ *sr*, փոխառաւ է: Այսպէս հայր, մայր, այրիլ = *պրս*. պաղար, մաղար, աղար բնիկ են, իսկ *usr* = կրակ, փոխառութիւն է:

Ինչ կարելի էր այս կարգի օրէնքների թւումը բաւական երկարել. բայց այսքանն էլ բաւական ենք համարում բացատրելու սկզբունքը, համաձայն Հիւրըմանի կրթառած մեթոդի:

Վերելում մէջ բերած օրինակների մէջ մենք գիտմամբ չիչեցինք այնպիսիները, որոնք իրար հետ կրկնակ են, կամ ուրիշ խօսքով միևնոյն արմատից ծագած ձեւեր են, մէկը զուտ հայկական, միւսը պարսկական կերպարանքով. այսպէս *սասն* և *դահադրամ*, հետք և փալիկ, նոր և նաւասարդ, կով և զաւազան, այրիլ և *usr*: Ստաջինները ունենալով մի որեւէ հայկական յատկանիշ (ս, հ, ո) բնիկ հայ են, իսկ երկրորդները ունենալով մի որեւէ պարսկական յատկանիշ (Յ, դ, փ, ա) պարսկական փոխառութիւն են:

Այսպիսի կրկնակ բառերի զուգորդութիւնն ու համեմատութիւնը հենց լուս ապացոյց է այն մասին՝ թէ արուած օրէնքը շատ ճիշտ է: Երբ հայ ականջը կը լսէր *պրս*. դան (տասը) բառը, անշուշտ չէր զարձնի հյ. *սասն*, այլ դան. կամ երբ կը լսէր պալ, նավ, զավ, չէր զարձնի հետ, նոր, կով, այլ փալ, նաւ, զաւ: Ուստի ինքնին հասկանալի է որ վերոյիշեալների մէջ առաջին ձեւերը բնիկ հայ են, երկրորդները պարսկական փոխառութիւն:

Բայց այս կրկնակները մեզ սովորեց-

(*) Շարունակութիւն՝ մեծամուն հեղինակի «Պատմութիւն Հայ Լեզուի» գործին Թ. Գլուխէն:

նում են և մի ուրիշ բան. այդ այն է՝ որ երբ մի հայերէն բառ ճիշտ տառադարձութեամբ և տառ առ տառ ծածկում է մի իրանեան բառ, անշուշտ փոխառութիւն է. խոյ երբ ներկայացնում է մեծ ու փոքր չեղումներ և յատկապէս տառադարձութեան տարբերութիւն, ուրեմն բնիկ հայկական է:

Կարող էին ոմանք առարկել թէ տառադարձութեան տարբերութիւնը անպատճառ ծագման տարբերութեան նշան չէ (մին բնիկ, միւսը փոխառեալ), այլ թէ կարող են բառերը հնթարկուած լինել տարբեր տառադարձութեանց և դարձեալ լինել միևնոյն ծագումից (կամ բնիկ և կամ փոխառեալ): Սրա դէմ մենք պիտի յիշեցնենք զուտ պարսկական անձնական յատուկ անունների տառադարձութիւնը (ինչ. Բիւրասպի Աժդահակ, Բրգատվճնասպ, Բիգտրուզիտ, Պարչնագլատ, Վեհհենչապուհ-Վեհ-անջատու-Ստարով, Ահմատան, Գունդիշապուհ են), որ միշտ գտնում ենք հաւատարիմ տառադարձութիւն և ոչ բնաւ տառադարձական չեղումներ:

Բացի ձայնական օրէնքներից, բառի ծագումը ճշտելու համար երբեմն մեզ օգնութեան են հասնում իմաստի տարբեր առումները: Օրինակի համար հնիս. բնեղի արմատը ներկայացնում է հյ. բոյր և զնդ. բաօիլի ձևով: Հարց է թէ բոյր բնիկ է թէ փոխառեալ: Զայնական օրէնքներով բնեղի պիտի տար իբրեւ բնիկ հայերէն գոնէ բոյղ. մինչդեռ զնդ. բաօիլի պիտի տար բոյր: Սերեմն բառը փոխառեալ է ըստ ձևի: Սակայն բնեղի արմատը ցեղակից լեզուների մէջ նշանակում է «արթուն լինել, հսկել, ուշադիր լինել, գիտել, նկատել են». եւ միայն իրանականի մէջ ստացել է օգգալ, հոտ առնել» իմաստը, որ առաջինների մի նոր առումն է: Այսպէսով հայ և իրանեան բառերի իմաստի նոյնութիւնը երկրորդ անգամ ապացուցանում է որ իրօք բոյր փոխառեալ է և ոչ բնիկ:

Կան ձայնական օրէնքներ, որոնք թէ հայերէնի և թէ իրանեանների մէջ միևնոյն արդիւնքն են տալիս. օր. մ, ն, թէ՛ հայերէնի և թէ իրանեանց մէջ գտնում են մ, ն. նոյնպէս հնիս. Լ երկուսի մէջ էլ տալիս է ա. հնիս. բն, դն, զն, զւն, երկուսի մէջ էլ գտնում են բ, գ, զ, զ, զ ևն:

Այս պարագային կարելի չէ իմանալ թէ այսինչ բառը բնիկ հայ է թէ փոխառեալ: Հարցը վճռում է բառի մէջ գտնուած ուրիշ ձայներով կամ նշանակութեան երանգով: Այսպէս՝ հնիս. բնեւ արմատի նախաձայնը բն գտնում է հյ. բ և իրան. բ. բայց որովհետեւ և մնում է հյ. ե, խոյ իրանեանների մէջ գտնում է ա, ուստի և բնեւ բառի ներկայացուցիչ հյ. բերեմ բնիկ հայերէն է և ոչ թէ փոխառեալ իրան. բառաւի ձևից: Այսպէս նաեւ բնեւիլ — բոյր բառի մէջ թէև բն երկուսի համար էլ տալիս է բ, բայց վերջաձայն տ և նշանակութեան տարբերութիւնը՝ ինչպէս քիչ առաջ բացատրեցինք, ցոյց են տալիս որ բառը փոխառեալ է և ոչ բնիկ:

Լինում են դէպքեր, երբ թէ՛ ձայնական օրէնքները և թէ նշանակութիւնը բաւական չեն լինում. որովհետեւ բառը թէ բնիկ և թէ փոխառեալ լինելու պարագային նոյն ձևն է ստանում: Այսպէս օր. նաւ կարող է լինել թէ բնիկ հայերէն (որովհետեւ հնիս. ձևն է նաւ որ կանոնաւորապէս տալիս է հյ. նաւ) և թէ փոխառեալ (որովհետեւ պրս. ձևն է նաւ, որ նոյնպէս տալիս է հյ. նաւ): Նոյնպէս հյ. դաւ կարող է լինել թէ բնիկ հայերէն (որովհետեւ հնիս. ձևն է դաւրն, որ պիտի տար հայ. դաւ) և թէ փոխառեալ (որովհետեւ իրանեան ձևն է զնդ. դաւա, որ նոյնպէս պիտի տար հյ. դաւ):

Այսպիսի բառերի թիւը բարեբախտաբար շատ քիչ է:

Շատ բան կապուած է այն հարցի հետ թէ հայերէնի իրանեան փոխառութիւնները ե՞րբ են կատարուած: Անշուշտ այն բոլոր բառերը որ փոխ է առել հայերէնը պարսկերէնից, մի անգամից եւ մի օրում չի փոխ առել. այլ 1600 տարուայ կենսակցութեան մէջ գանազան շրջաններում: Ամէն մի բառի ճիշդ որոշ թուականը որոշել անկարելի է, բայց գոնէ մօտաւորապէս կարելի է և պէտք է որոշել այն շրջանը, երբ կատարուած են փոխառութիւնները: Սրա համար որոշենք նախ պարսկերէն լեզուի շրջանները:

Ամենահին շրջանում հայոց յարաբերութիւնը եղել է մարերի հետ. Սարաբոն ասում է թէ «Կարծի սակայն թէ Մարք են որ եղեն առաջին դաստիարակք Հայոց, որ-

պէս եղենն Պարսիցն: Ուստի փոխառութիւնները կնքուած պէտք է լինին մարերէնից: Բայց մարերէնը անձանթ լինելով կարելի է քննել այս հարցը: Սակայն որովհետեւ մարերէնը չափազանց մօտ էր պարսկերէնին և հենց զրա համար էլ չուտով վերացուեց Մարաստանից ու դարձաւ պարսկերէն, այսպէս էլ հայերէնի մարական փոխառութիւնները անշուշտ չուտով ձեւափոխուեցին և ստացան պարսկական կերպարանք և այսօր նրանք գտնուում են պարսկական փոխառութեանց թւում: Զայնարանական օրէնքներով հաստատուում է որ պարսկերէնը մարականից մի խումբ բառեր ունէր փոխ առած. այդ բառերի մի մասը գտնուում ենք նաև հայերէնի մէջ. ինչ. վրուկ, զուր, զան, ասպ, բազ, Միհր, փառք, մոզ և որանից կազմուած անուններ: Բայց իրաւունք չունինք ասելու թէ զրանք մենք ուղղակի մարերից ենք վերցրել: Աւելի յարմար են գտնո, Գանձակ, Բրինձ և պղինձ, որոնք իրենց ձեւով փխ. զ՝ մարական ծագում ունին:

Պարսկերէն լեզուն ներկայացնում է հետեւեալ շրջանները.

1. Հին պարսկերէն, որ կիրարկուեց և Դարհնների ժամանակի լեզուն է. այս լեզուն աւանդուած է մեզ Պերսեպոլի եւ այլ մի քանի բեկոռաղիր արձանագրութիւններով, որոնք գրուած են Ն. Բ. 560-330 թուերին:

2. Պահլաւերէն կամ միջին պարսկերէն, որ ունի երկու ստորաբաժանում. ա) Արշակունեան պահլաւերէն, որ կոչւում է նաև հին կամ պարթեական պահլաւերէն և է պարսից Արշակունեան թագաւորական հարստութեան ժամանակի լեզուն, այն է Ն. Բ. 256-226 Յ. Բ. Արշակունի թագաւորները դժբախտաբար իրենց արձանագրութեանց մէջ բնաւ չեն գործածել այս լեզուն, այլ գրել են արամերէն կամ յունարէն. միայն վերջերս գտնուեցին մանիքէական զանազան պարթեական գրուածքներ: բ) Սասանեան պահլաւերէն, որ կոչւում է նաև նոր պահլաւերէն և է պարսից Սասանեան թագաւորական հարստութեան ժամանակի լեզուն, այն է 226-642: Պահլաւերէնը աւանդուած է մեզ մի քանի արձանագրութիւններով և զանազան մագդէական կրօնական գրուածքներով, ինչ-

պէս են Արտավիրաթ, Կարնամակ, Մանուխրատ ևն: Աւելի նոր ժամանակից կան մանիքէական գրուածքներ:

3. Պարսկերէն կամ յաւակապէս նոր պարսկերէն, որի հնագոյն յիշատակարանն է Ֆիրտուսի Շահնամէն (Ժ. դար) և քիչ փոփոխութեամբ խօսուած է մինչև այսօր էլ Պարսկաստանում՝ զանազան բարբառներով:

Աշխարհիս մէջ ոչ մի գրականութիւն կարող է լեզուի մէջ գտնուած բոլոր բառերը գործածած լինել: Բառարաններն անգամ կատարեալ չեն լինում: Այս կողմից շատ պակասաւոր է պարսկերէնը, հետեւեալ պատճառներով.

Ա. Նախ աւանդուած է մեզ մակեդոնական շրջանի (330-256) և արաբական շրջանի (643-Ժ դար) պարսկերէն լեզուն:

Բ. Ամբողջ աւանդուած գրականութիւնն էլ մեծ արժէք չի ներկայացնում. նախ որ նիւթը շատ միակողմանի է և երկրորդ որ գրական արտագրութիւնները շատ փոքր թիւ են կազմում: Հին պարսկերէն արձանագրութիւնները տալիս են մեզ միայն 400 բառ. պահլաւական գրականութիւնը թէև համեմատաբար շատ աւելի հարուստ, բայց դարձեալ ոչինչ բան է, օրինակ՝ համեմատած հին հայ գրականութեան հետ:

Գ. Պահլաւերէնը գրուած է շատ անկատար ալրուբենով, այնպէս որ շատ անգամ բառերի ընթերցանութիւնը անորոշ է մնում:

Պարսկերէն լեզուի ներկայացրած այս թերոյթները ի հարկէ լրացւում են զանազան կողմնակի միջոցներով: Այսպէս՝ 1) Սանսկրիտ լեզուն կամ հին հնդկերէնը, որ այնպէս նման է հին պարսկերէնին, շատ անգամ միտահելի առաջնորդ է մեզ և ենթադրել է տալիս թէ ինչ պիտի լինէր այսինչ բառի հին պարսկերէն ձեւը: 2) Իրանեան ճիւղին պատկանող տարբեր լեզուներ, ինչպէս զենգերէնը, աֆղաներէնը, բելուճերէնը, քրդերէնը, օսիթերէնը և սոգդերէնը՝ նոյնպէս և աւելի կարեւոր առաջնորդ են մեզ որոշ հարցեր լուծելու և որոշ բառերի գոյութիւնն ու ձեւը գուշակելու համար: 3) Վերջապէս կան բազմաթիւ արդի պարսկական բարբառները, որոնցից լեզուաբանը կարող է օգտուել լայն չափերով:

Այնուամենայնիւ այս բոլորն էլ վերջնական միջոցներ չեն և շատ ու շատ բաներ կան, որոնց երբեմնի զոյւթիւնը պարսկերէնի մէջ հենց հայերէնն է մատնանիշ անուամբ, բայց կարելի է չէ լինում ոչ մի գրական աղբիւրի, ոչ մի ազգական լեզուի և ոչ մի բարբառի մէջ գտնել ու հաստատել նրանց ենթադրեալ զոյւթիւնը: Այսպէս օրինակ՝ աճուռան որ յայտնապէս պարսկերէն բառ է և որի առաջին մասն է պրս. ալլար, այնուամենայնիւ ոչ մի իրանեան լեզուի մէջ չկայ և մեզ յայտնի չէ թէ ինչ բառ է ուռան վերջաւորութիւնը:

Վերոյիշեալ երեք լեզուները, հին պարսկերէն, պահլաւերէն և պարսկերէն, թէև անուանեցող տարրեր, բայց իրապէս միևնույն լեզուն են և ներկայացնում են միևնույն լեզուի միևնույն բարբառի (այն է Շիրազ) զանազան յաջորդական ժամանակները: Այս պատճառով էլ շատ անգամ լեզուաբանութեան մէջ պարզապէս կոչում են պարսկերէն և այս բառով հասկացում է անխափր բոլոր երեք շրջանների լեզուն: Այնուամենայնիւ երեք շրջանների, ինչպէս և միւս միջանկեալ շրջանների լեզուն, զգալաբար տարբերում են իրարից՝ երբեմն աւելի, երբեմն պակաս չափով և նրանց միութիւնը հաստատելու համար լեզուաբանական աշխատանք է հարկուոր: Այստեղ իբր օրինակ դնում ենք մի քանի բառ՝ երեք շրջանների լեզուով.

հայ.	նպրս.	պնի.	պրս.
աշխարհ	խշաթրա	շատր	շահր
տարի	սարդա	սարդ	սալ
մեծ	վազարկա	վազարդ	բուզուրդ
զիւղ	զահյու	զհհ	զիհ
ծառայ	բանդակա	բանդակ	բանդա
պատկեր	պատիկարա	պատկար	փալքար
գուռ	գուվարա	գար	գար

Այժմ պէտք է քննել թէ հայերէն փոխառութիւնները ո՞ր շրջանին են պատկանում. քննութիւնները ցոյց են տալիս, որ ամէն շրջանից էլ փոխառութիւններ կան և այդ բնական էր, քանի որ հայերը 1600 տարի մշտապէս հարեան են եղել իրանեանների հետ: Այս բանը յայտնի կերպով երևում է այն բառերից, որոնք մի քանի անգամ փոխ են անուանել իրանեաններից և զանազան ձևերի տակ, որոնք

իրապէս նոյնն են և ներկայացնում են նոյն բառի զանազան շրջանների արտասանութիւնը: Օրինակ՝

Աւխարհ. — այս բառի հնագոյն ձևն է հպրս. խաւարա, որ հին Արշակունի պահլաւերէնի մէջ եղաւ խաւար, խաւսր, յետոյ խաւիր. աւելի նոր Սասանեան պահլաւերէնի մէջ դարձաւ Խաւսր, Խաւիր, որից էլ պրս. Խաւիր, հիմա էլ արտասանւում է Եհիր: Հայերը փոխ առին բառը նախ Արշակունեաց ժամանակ, երբ խաւիր ձևն ունէր, որ քսո հայկական ձայնական օրէնքների վերածեցին աւխարհ ձևին. երկրորդ անգամ փոխ առին Սասանեանների ժամանակ Խաւիր ձևի տակ, որից կազմեցին Խաւասան, Խաւապ ևն:

Պաւեսպան. — հնագոյն ձևն է հպրս. պաւեսխպանա, որ անշուշտ Արշակունեաց ժամանակ դարձել էր պաւեսպան և այստեղից էլ կազմուեց հյ. պաւեսպան: Նոյն բառը Սասանեանց ժամանակ եղաւ պուեսիկպան, փուլեսիպան, որից հյ. փուլեսիպան. նորագոյն ժամանակ՝ պրս. փուլեսիբան որ հայերէնի մէջ ներկայացուցիչ չունի:

Հրասպա. — հնագոյն ձևն էր հպրս. պարասանդա, պահլաւական շրջանին Ֆրասախ, նոր պրս. Ֆարասախ. հայերէնը փոխ է առնուած մի անգամ պահլաւական հրասախ ձևով, աւելի ուշ պարսկական փարասախ ձևով, հիմա էլ Պարսկահայոց մէջ Ֆարասախ ձևով:

Ասպարապէս, սպարապէս. — հպրս. սպաղապաւի, Արշակունեան պհլ. սպաղապաս, որից առնուեց հյ. սպարապէս. Սասանեանց ժամանակ եղաւ պհլ. սպան պաս, որից կազմուեց հյ. ասպահապէս. աւելի նոր ժամանակ պրս. սիփանբաղ, որից էլ այսօր կազմում ենք սիփանբաղ:

Արամաղ. — հնագոյն ձևն է հպրս. Անուրամաղա, որ Արշակունեաց ժամանակ եղաւ պհլ. Օնուրմաղ, Սասանեանց ժամանակ Հարմիղ, նոր. պրս. Հուրմուղ, որ նորագոյն հնչմամբ է Հուրմուղ կամ Հիւրմիւղ: Հայերէնը փոխ է առնուած երեք անգամ և երեք ձևով՝ Արամաղ, Արմիղ, Հիւրմիւղ: Առաջինը ընկնում է Արշակունեաց հին շրջանին, որովհետև Արամաղ բառը ձևով աւելի հին է պահլաւական արձանագրութեանց Օնուրմաղ ձևից և աւելի մօտ հպրս. Անուրամաղա-ին: Երկրորդը ընկնում է

Սասանեանց չըջանին և աւելի նոր է քան հին Սասանեան Հորմազդ ձեռք վերջապէս շիւթիւղ (իրբե ազգանուն գործածուած) պատկանում է շատ նորագոյն չըջանին (ԺԲ. դար)։

Վահագն. — հնագոյն ձեռք է հարս. վերապնա, Արշակունեաց ժամանակ եղաւ պհլ. Վահագն, որից յառաջացաւ հյ. Վահագն և յետոյ Վահագն։ Հին Սասանեանց ժամանակ բառը դարձաւ Վահագն, ինչպէս գտնուած ենք արձանագրութեանց և դրամներէ մահադրութեանց մէջ։ Նոր Սասանեանց ժամանակ կրճատուելով եղաւ Վահագն, որից հյ. Վահագն կամ կրճատուած Վ.ա.ն, նոր պարսկերէնի մէջ եղել է Բահագն, որից էլ հայերէն տառադարձուած Բահագն դրուած ենք Բահագն կամ Բեհագն։

Վ.րկ.ն. — հնագոյն ձեռք է հարս. Վ.րկ.ա.ն, որ Սասանեանց ժամանակ եղաւ Գուրգէն, նոր պարս. Գուրգէն, հիմա էլ արտասանուած է Գուրգէն. հայերէնի մէջ էլ ունինք Արշակունեաց ժամանակից Վ.րկ.ն, Սասանեան չըջանից Գուրգէն, հիմա էլ Պարսկաստանում գործածական է Գուրգէն։

Պարբե. — հնագոյն ձեռք է հարս. Պարբաւ, Սասանեանց ժամանակ եղաւ պահլաւ, որ է պարս. պահլաւ, հիմա էլ վիեկլեի։ Հայոց մէջ բառը փոխ է առնուած հին Արշակունեաց ժամանակ, երբ գեո ր ձայնը վերածուած չէր և, ինչպէս եղաւ յետոյ։ Սասանեանց ժամանակ երկրորդ անգամ փոխ առնելով դարձաւ պահլաւ, այժմ էլ գրուած ենք ըստ նորագոյն արտասանութեան վիեկլեի։

Կարելի էր այս կարգի օրինակներէ թիւը դեռ շատ երկարել, բայց այսքանն էլ բաւական է ցոյց տալու համար որ փոխառութիւնները տեղի են ունեցած դանդաղ ժամանակներ, սկսած հնագոյն շրջանից մինչև ԺԱ. դար և դեռ այսօր էլ շարունակուած են Պարսկաստանում՝ Պարսկահայոց մէջ։ Կարելի է մինչև անգամ կազմել իւրաքանչիւր բառի պատմութիւնը և հին պարսկերէն, ղենդերէն, Արշակունի և Սասանեան պահլաւերէն, պահլենդերէն ու պարսկերէն ձևերի համեմատութեամբ որոշել թէ ինչ ու ինչ շրջաններէ անցել է ամէն մի բառ։ Կարելի է նոյնպէս դանդաղել բառերը ըստ իրենց հոսքեան, որ երևան է հանուած ձևից ու զանազան

համեմատութիւններէ։ Այսպէս հյ. պահլաւ և պահլաւ աւելի նոր շրջանի և իրար ժամանակակից բառեր են, իսկ պահլեւ նրանցից աւելի հին է. որովհետեւ առաջինները ներկայացնում են պարսկերէնի 8-յ ձայնափոխութիւնը (պհլ. պահլաւ, պահլաւ, պահլենլ. պահլաւ, պարս. փայլաւ), իսկ պահլեւ բառը դեռ այդ ձայնափոխութիւնը չունի (պհլ. պահլաւ, պարս. փայլաւ)։ Նոյնպէս նկատ աւելի նոր է քան պահլեւ, որովհետեւ վերջինս ունի և ձայնաւորը, մինչդեռ առաջինը ունի ա։

Բայց ինչ որ էլ լինի, վերի համեմատութիւններից արդէն պարզ երևում է, որ փոխառութեանց մեծագոյն մասը, յատկապէս այն բառերը՝ որոնք մեր լեզուական ըմբռնողութեամբ աւելի հարազատ հայերէն բառեր են համարուած, փոխ են առնուած հին Արշակունի կամ Պարթևական շրջանին և ոչ Սասանեան։ Օր. Արշակունիք ունէին բառի սկիզբը և մէջը ժ, Սասանեանն ու Պարսկեր գ, Հայերէնը ժ։ Եւ այս նոյնպէս բնական է, քանի որ Պարթևական շրջանին հայերը շատ աւելի սերտօրէն կապուած էին պարսկերէնի հետ, կրօնքով, գրականութեամբ, նոյն իսկ թագաւորական տոհմով նոյն էին. իսկ Սասանեան շրջանին թէ՛ կրօնքով, թէ՛ թագաւորական տոհմով օտար, շուտով էլ գրականութեամբ բաժանուելին։ Ըստ այսմ փոխառութիւնները կարող ենք դնել քրիստոնէական թուականի սկիզբը կամ նրանից էլ մի քիչ առաջ, ինչպէս ենթադրուած է Հիւրշման, այսինքն՝ Տիգրան Մեծի ժամանակից անմիջապէս յետոյ։

Երբ հայերէն փոխառութիւնները համեմատուած ենք համադր պարթևական ձևերի հետ, առհասարակ գտնուած ենք որ նրանք ձևով նման են։ Բայց լինում են նաև այնպիսի տարբերութիւններ, որոնք կարելի չէ հայերէնի ձայնական առանձնաշատութիւններով բացատրել։ Օր. մինչդեռ պահլաւերէնն ու պարսկերէնն ունին դար = դուռ, դարպաւ = դռնապան, հայերէնի մէջ գտնուած ենք փոխառեալ բառապաւ, բարապէս, բարաւոր ձևերը, որոնց բոլորի մայրն է բար = դուռ իրանական բառը։ Նոյնպէս մինչդեռ պահլաւերէնն ու պարսկերէնն ունին ջ ձայնը, հայերէնը նրանց դէմ հանում է ձ՝ մի խումբ փոխառեալ

բառերի մէջ, ինչ. պղինձ, բրինձ, գանձ, անգլարձ, Դանձակ: Պէտք է ուրեմն ենթադրել թէ այս բոլորը յատուկ էին այն բարբառին՝ որից որ փոխառու ալ են հայերէն բառերը: Իրօք Պարսկաստանում մինչեւ այժմ էլ կան տեղեր՝ ուր ջ, չ, ձայնի տեղ արտասանում են ձ, ց: Աֆղաներէնն ունի պղինձա փո. պրս. փանջ = հինգ, նմանապէս բար գաւառական մի ձև է, որ դար (= գուռ) բառի կողքին գտնոււմ ենք այսօր էլ գանազան պարսկական բարբառներում. ինչ. Դիլանի բար, Ամմանի բար, Վալիի բար, Բրդ. բար, Քաւմիի բար, բեր, աֆղան. վար, բոլորն էլ դուռ նշանակութեամբ: Այս բարբառների մէջ իրանական դւ բառակցութեւմ գտնոււմ է բ, որով դար = գուռ գտնոււմ է բար: Այս օրէնքը յատուկ էր նաեւ հիւսիսային պահլաւական բարբառին և ահա այս բարբառն է՝ որ հիմք է ծառայել հայկական փոխառութեանց: Երբ հայերը փոխ էին առնում իրանական բառերը, անշուշտ չէին գնում Պարսկաստանի կենտրոնական նահանգները բառեր որտալու, այլ լսում էին իրենց մերձակայ Ատրպատականի մէջ խօսուած պահլաւերէնը և նրանից էլ ազդոււմ էին:

Թէ հայերէնը իր փոխառութիւնները կնքել է Ատրպատականի պահլաւերէն բարբառից՝ զեղեցիկ կերպով հաստատոււմ է Թուրքիանի նորագիւտ բնագիրներով: Թուրքիանը Չինական Թուրքեստանի մի քաղաք է, ուր վերջերս տեղի ունեցած զիտական արշաւանքի ժամանակ երևան հանուցին գանազան լեզուներով բնագիրներ (թոխաբերէն, քուչերէն, սոզգերէն, պահլաւերէն): Պահլաւերէն բնագիրները գանազան բարբառներով են. Թեզեհկո իրանագէտը մանրամասն քննութեան ենթարկելով ևւ գասաւորելով այդ բնագիրները, գտաւ որ նրանք ներկայացնում են երկու բարբառ. հիւսիսային և հարաւային. հիւսիսային պահլաւերէն բնագիրները ներկայացնում են լեզուական մի ձև և պատկանում են Արշակունեաց չրջանին. իսկ հարաւայինները ներկայացնում են լեզուական գանազան ձևեր, որովհետեւ պատկանում են Սասանեան չրջանի գանազան թուականներին:

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌԵԱՆ

(Շարունակելի)

Ս. ՅԱՆՈՐԻ ՆԵՐՍԷՆ

ՏՕՆ Ա. ԿԱՆՔ ԵՒ ԲԵՐԱԿԱՆՔ

* 28 Դեկտ. կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ. քարոզեց Տ. Սերգեյի վրդ. «Ձի օր ոչն է ընդ մեզ հակառակ ի մեր կոյս է» բնարանով. այս խօսքին մէջ ուղեց տեանի քրիստոնէական կրօնին լայնախօհութեան օգին: Քրիստոնէութիւնը սկզբունքներու, օրէնքներու կրօն մը ըլլալէ աւելի, օգին կրօնքն է: Այս իսկ պատճառաւ ալ մէն մարդ, քրիստոնէայ կամ ոչ, գործակից կ'ըլլայ Քրիստոսի, եթէ նոյն օգին ունենայ իր հօգին և իր կեանքին մէջ:

* 4 Յունուար կիր. — Ուրբաթ օրէն նստիլ սկսող ձիւնը, այսօր դոցեր էր գրեթէ ճամբաները, և այս պատճառաւ կարելի չեղաւ Ս. Յառութեան տաճարը երթալ, Հայկական Վերնաւան մէջ մատուցանելու համար Ս. Պատարագը: Սակայն Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց եկեղեցին: Վերջին տառերիւ տարիներու ընթացքին այս երբօրդ անգամն է, եւ ամենէն առատը, որ կը ձիւնէ:

* 5 Յուն. իշ. — Սերգեյ Դաւիթ Մարգարէին և Յակոբայ Տեառնեղոյս Առաքելոյն. — Երէկ երեկոյեան հանդիսաւորապէս կատարուեցաւ բացումը աւագ տօներու շարքին Ամեն. Ս. Պատարագը Հայրը «Հրաշափառ»ով առաջնորդուեցաւ եկեղեցւոյ դաւիթէն զէպի ներքին տառերու, ապա պաշտուեցաւ երեկոյեան ժամերգութիւնը և նախատօնակի արարողութիւնը:

Այսօր, առաւօտեան ժամկուսիեան պահուն, Ամեն. Ս. Պատարագը՝ շուրջառագեցաւ, խաչ ու գաւազան ի ձեռին, Տեսնեղոյսը Աթոռին վրայ բազմեցաւ, ինչպէս սովորութիւն է ընել, տարին անգամ մը, ա՛յս տօնին, ժամերգութեան աւարտումին: Ամեն. Ս. Պատարագը Հայրը ընդունեց Միաբանութեան բոլոր անգամներուն մայրամբն ու աջահաւորայնները: Ս. Պատարագը մատոյց Դիր. Տ. Կիրիլ Թ. Վրդ. և քարոզեց. «Այսօր է դժարաւ Տէր, եկայք և ցնծացուք ի սմա» բնարանով: Օրուան սուրբերը՝ Դաւիթ մարգարէն և Յակոբայ Տեսնեղոյսը առաքեալը ներկայացուց իրենց կեանքին յատկանշական կողմերով, իրեն վեհանձնութեան, արգարութեան, հաւատարմութեան և սրբութեան տիպարները: Ապա բարեմայրութիւններ բրաւ Ամեն. Ս. Պատարագը Հօր արեւշառութեան և երջանկութեան համար:

«Հայր մեր» էն առաջ կատարուեցաւ Հօգեհանգստեան պաշտօն. Ս. Աթոռոյ հանգուցեալ պատարագներու հօգույն փրկութեան համար: Ս. Պատարագի աւարտումին Միաբանութիւնը թափօրով և «Օրհնեցէք զՏէր» երգելով Պատարագարան ելաւ, ուր Ամեն. Ս. Պատարագը կրկին ընդունեց մայրամբները Միաբանութեան: